

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի
2014 թվականի <<մարտի >> <7>> -ի թիվ << 2>> որոշմամբ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ԱՄՄՔ – ՊԸԱՇՁԲ - 14/1

Պատվիրատուն՝ ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքապետարանը, որը գտնվում է ք. Մասիս Կենտրոնական հրապարակ 4 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի III թաղամասի 5;9;10;11 և նոր թաղամասի 13;19;22/1;22/13;23;28;31 բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի պարզեցված ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից հաշված՝ 10-րդ օրը ժամը 11⁰⁰: Ընդ որում փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն 1000 ՀՀ դրամը վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ներկայացնելու դեպքում այդպիսի պահանջ ստանալու օրը: Վճարումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ ֆինանսների նախարարության 900435101457 հաշվեհամարին:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Մասիս Կենտրոնական հրապարակ 4 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարությունը հրապարակման հաջորդ օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 11⁰⁰-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ս.Հովհաննիսյանին:

Հեռախոս 094-42-69-82-:

Էլ.փոստ՝ stepan-hovhannisyan@mail.ru:

Պատվիրատու՝ Մասիսի քաղաքապետարան:

Հաստատված է

ԱՄՄՔ – ՊԸԱՇՁԲ - 14/1 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի
2014 թ. << մարտի>> <<7>>-ի թիվ <<3>> որոշմամբ

<<Մասիսի քաղաքապետարան >>

Հ Ր Ա Վ Ե Ր

<<Մասիսի քաղաքապետարան>>-ի կարիքների համար՝ << ՀՀ Արարատի մարզի
Մասիս քաղաքի III թաղամասի 5;9;10;11 և նոր թաղամասի 13;19;22/1;22/13;23;28;31
բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերի հիմնանորոգման
աշխատանքների >> ձեռքբերման նպատակով
հայտարարված պարզեցված ընթացակարգի

Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք

ա. մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման.

բ. գնման առարկան զննել վերջինիս գտնվելու վայրում, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերաբերում են հայտի նախապատրաստմանը և պայմանագրի կնքմանը /սահմանվում է, եթե պարզվի, որ կողմից ձեռք են բերվում շինարարական աշխատանքներ /:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<<Մասիսի քաղաքապետարան >>-ի կարիքների համար՝ <<ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի III թաղամասի 5;9;10;11 և նոր թաղամասի 13;19;22/1;22/13;23;28;31 բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքների >> ձեռքբերման նպատակով հայտարարված սույն պարզեցված ընթացակարգի հրավերի

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Հայտի ապահովումը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-9

7. Ցանկ մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն <<Մասիսի քաղաքապետարան>>-ի (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ << ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի III թաղամասի 5;9;10;11 և նոր թաղամասի 13;19;22/1;22/13;23;28;31 բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքների >> ձեռքբերման նպատակով, << ԱՄՄՔ – ՊԸԱՇՁԲ - 14/1 >> ծածկագրով անցկացվող պարզեցված ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մասիսի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<masismer@mail.ru>>

1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում Մասիսի քաղաքապետարանի կարիքների համար՝ << Արարատի մարզի Մասիս քաղաքի III թաղամասի 5;9;10;11 և նոր թաղամասի 13;19;22/1;22/13;23;28;31 բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքների >> **ձեռքբերումը, որոնք խմբավորված են <<տասնմեկ>> չափաբաժնում՝**

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Մասիս քաղաքի III թաղամասի թիվ 5 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
2	Մասիս քաղաքի III թաղամասի թիվ 9 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
3	Մասիս քաղաքի III թաղամասի թիվ 10 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
4	Մասիս քաղաքի III թաղամասի թիվ 11 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
5	Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 13 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
6	Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 19 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
7	Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 22/1 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
8	Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 22/13 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
9	Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 23 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
10	Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 28 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ
11	Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 31 բազմաբնակարան շենքի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ

<<Մասիսի քաղաքապետարան >>-ի կարիքների համար՝ << Արարատի մարզի Մասիս քաղաքի III թաղամասի 5;9;10;11 և նոր թաղամասի 13;19;22/1;22/13;23;28;31 բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերի հիմնանորոգման աշխատանքների >> ծավալաթերթերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

*Սույն հրավերով նախատեսված աշխատանքները կատարելու համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	հիդրոտեխնիկական
2	հիդրոտեխնիկական
3	հիդրոտեխնիկական
4	հիդրոտեխնիկական
5	հիդրոտեխնիկական
6	հիդրոտեխնիկական
7	հիդրոտեխնիկական
8	հիդրոտեխնիկական
9	հիդրոտեխնիկական
10	հիդրոտեխնիկական
11	հիդրոտեխնիկական

2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) տեխնիկական միջոցներ,

4) ֆինանսական միջոցներ,

5) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի		
առարկան	ծավալը՝ գումարային արտահայտությամբ	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները

	(ՀՀ դրամ)	
1	2	3
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		

,

2) Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում հիդրոտեխնիկական աշխատանքների կատարումը:

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2. նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին՝ կցելով այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
1			
2			

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Բեռնատար մեքենա	ցանկացած	1
ՄԱԳ	ցանկացած	1

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի չձևափոխված/դրական/ աուդիտորական եզրակացություն:

2) Այն ընկերությունների դեպքում, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե աուդիտորական եզրակացությունը տրված է ՀՀ կառավարության 29/11/2011թ. N 1931-Ն որոշմամբ նախատեսված <<Աուդիտի միջազգային ստանդարտ 700-ի>> պահանջներին համապատասխան:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսները առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

Առնվազն մեկ աշխատակից ինժեներ-շինարարի որակավորմամբ:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում Մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

3.6 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

4. Հայտը ներկայացնելու կարգը

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Պարզեցված ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակման հաջորդ օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 11⁰⁰-ն, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ 4 Քաղաքապետարանի վարչական շենք 4-րդ հարկ հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ս.Հովհաննիսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. սույն հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը /ներառյալ որակավորման չափանիշները հավաստող սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը /,

բ. գնային առաջարկ,

գ. հայտի ապահովում,

դ.* ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ) առաջարկներ գնման առարկայի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ (ծավալաթերթ-նախահաշիվ)

ե. էլեկտրոնային փոստի հասցեն,

զ. հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

*Եթե նախատեսվում է սույն հրավերով

5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու

և դրանք հետ վերցնելու կարգը

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Փաստաթղթային ձևով հայտ ներկայացնելու դեպքում հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է՝ սույն հրավերի II մասի՝ <<Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու>> հրահանգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

6. Հայտի ապահովումը

6.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տրուսների ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 7 հավելվածով:

6.2 Հայտի ապահովումը՝ տրուսները, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին փակ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

7. Հայտերի բացումը

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ սույն ընթացակարգի հայտարարությունը տեղեկագրում հրապարակման հաջորդ օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 11⁰⁰-ին ք.Մասիս Կենտրոնական հրապարակ 4 Քաղաքապետարանի վարչական շենք 4-րդ հարկ, հասցեում:

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած

գինը՝ տրուսներով և թվերով արտահայտված, տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հաբուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտերի և դրանց գնահատման թերթիկների երկուական օրինակները փոխանցում է հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ՝

1) գնահատում է ներկայացված հայտերը.

2) գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկում:

7.2.3 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

7.2.4 Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

7.2.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տրուսներով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տրուսներով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ փոխադրված օրվա Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

7.2.5.1 Գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների, **իսկ շինարարական աշխատանքների դեպքում՝ նաև ծավալաթերթ-նախահաշիվների** թվաբանական ճշտությունը: Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով.

1) եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը:

2) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) աշխատանքի ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ՝ փոխելով աշխատանքի համար առաջարկված ընդհանուր գինը:

3) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի տասնորդական գրառման մեջ ստորակետի ոչ ճիշտ տեղումն է, ապա կլորացման արդյունք է, ապա ճշտումը կատարվում է տվյալ աշխատանքի համար առաջարկված ընդհանուր գնի պահպանմամբ՝ ճշտելով միավորի գինը:

4) գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

7.2.5.2 **Շինարարական աշխատանքների գնման դեպքում** մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների տարբեր տողերում նշված նույն աշխատանքների դեպքում աշխատանքների միավոր գները պետք է նույնը լինեն: Այդ գների երկու կամ ավելի տարբերակների դեպքում կընդունվի նվազագույնը, որի մասին պատվիրատուն երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

7.2.6 **Հանձնաժողովի, Պարվիրարուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝**

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.7 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

1) առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր Մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր Մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, ընդ որում՝ սույն կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում պարտադիր է Մասնակցի կողմից ծանուցման սրացման ավստոսագր եղանակով հետ հաստատումը, իսկ գրավոր տարբերակով ծանուցման դեպքում ծանուցումն ուղարկվում է պարվիրարված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, կամ Մասնակցին հանձնվում է առձեռն՝ նշելով վերջինիս կողմից դրա սրացման ամսաթիվը: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկող տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

3) բանակցությունները վարվում են ոչ շուրջ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը:

4) յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար, նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

5) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում է հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները :

6) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.3 Գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է հանձնաժողովի անդամների ներկայացրած գնահատման թերթիկները և կազմում հայտերի գնահատման արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի անդամները:

7.4. Պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով:

7.4.1 Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պայմաններ և դրա կողմ հանդիսացող անձի՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները):

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալի փոփոխությունն իրականացվում է Պարտավորության համաձայնությամբ:

4) Մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալի պարտավորությունների համար:

7.4.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համարել գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համարել գործունեության պայմանագիր:

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համարել գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

3) Մասնակիցները կրում են համարել և համապարտ պատասխանատվություն:

4) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հեղ Պարտավորության կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պայմանները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը

8.1 Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում՝ հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում Մասնակցի հայտը գնահատվում է բավարար:

2) չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ Մասնակցի հայտը մերժվում է:

Ընդ որում գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում են 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշների վերաբերյալ փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և համապատասխանության դեպքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը համարվում է ընտրված մասնակից, որին էլ ներկայացվում է պայմանագիր կնքելու առաջարկ: Հակառակ դեպքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին սույն հրավերով սահմանված կարգով տրվում է որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն: Սահմանված ժամկետներում նշված անհամապատասխանությունները շտկվելու դեպքում մասնակցին սահմանված կարգով ներկայացվում է պայմանագիր կնքելու առաջարկ: Նշված անհամապատասխանությունները 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից չշտկվելու դեպքում գնահատող հանձնաժողովը գնահատում է 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը: Գնման գործընթացը շարունակվում է նույն կարգով, և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները սահմանված կարգով չշտկվելու դեպքում ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

8.2. Հայրը գնահատվում է բավարար, եթե սույն հարվերի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

8.3 Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հարվերի ընթացակարգի հայրը պատրաստելու հրահանգով նախատեսված պահանջները:

8.4 Հայրերի գնահատման արդյունքներով կազմվում է հայրերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնումների համակարգողը և (կամ) հանձնաժողովը կարող են ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) սույն գնման գործընթացին տվյալ Մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ Մասնակցի հետ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պաշտիրապորտի կողմից միակողմանիորեն լուծվում են:

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պաշտիրապորտի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3) ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պաշտիրապորտի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտին դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պաշտիրապորտն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր Մասնակիցները:

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պաշտիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր Մասնակիցներին:

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պաշտիրապորտի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պաշտիրապորտի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

*Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում << 5 >> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պաշտիրապորտն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ Մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

9. Պայմանագրի կնքումը

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պաշտիրապորտի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված Մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պաշտիրապորտն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

9.3 Եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված

Ժամկետում Պաշտպանության ներկայացնում պայմանագրի, **իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

9.4 Մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10. Պայմանագրի ապահովումը

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված Մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված Մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված N 8):

11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3 Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները

բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են իր իրավունքները, կամ կրել է, կամ կարող է կրել վնասներ, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

1) գնումների աջակցման կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը և (կամ) առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան:

